Ձիերը վրանի առջեւ պատրաստ էին. նա եւ բեկը հեծան, եւ առնելով իրանց հետ մի քանի ծառաներ, հեռացան:

— Ու՞ր են գնում, — հարցրի բէկի որդուց, որ ինձ մօտ նստած էր:

— Մեզանից ոչ այնքան հեռու մի աւերակ բերդ կայ, հայրս միտք ունի նորոգել տալու, գնում են այն բերդը տեսնելու, — ասաց նա:

Ինձ շատ հետաքրքրական չէր այդ, որովհետեւ ես ուր որ գնում էի, միշտ աւերակ բերդեր էի տեսնում: Վանայ կողմերի լեռները լիքն են աւերակ բերդերով, եւ նրանք ամենեւին չէին գրաւում ինձ: Բայց նոյն րոպէում իմ միտքը գրաւել էր գեղեցիկ օրիորդը. մտածում էի՝ թէ այն ի՞նչ խօսք էր, որ նա ասաց ինձ, եւ ինչո՞ւ այնպէս ակամայ փղձկեցաւ նա: Բայց որտե՞ղ միւս անգամ կարող էի տեսնել նրան:

Շուտով մեզ նախաճաշիկ տոեցին: Քրդի նախաճաշիկը շատ համեղ է լինում. նա պատրաստուած է սերը, կարագը, մածունը մեղրի հետ խառնած մի բաղադրութիւնից, եւ համեմած է լեռնային բոյսերով: Հացը նրանք թխում են երկաթեայ լայն կասկարայի վրայ: Ես վաղ առաւօտեան տեսնում էի, թէ որպէս կանայք փութաջան կերպով հաց էին պատրաստում: Եւ չնայելով, որ բեկը մի ամբողջ ցեղի գլխաւորն էր, դարձեալ նրա կանանց, աղջիկների եւ հարսների մէջ չէր երեւում այն, այսպէս ասած, տիկնութեան անշարժութիւնը, որ տիկինները հանգիստ նստած, տնային բոլոր գործերը աղախիններին եւ սպասաւորներին են կատարել տալիս: Քրդի կինը, թէ իշխանի տիկին լինէր նա եւ թէ հասարակ հովոի, իր տնային գործերը իր ձեռքովն է կատարում: Քրդի տնտեսութեան մէջ անգործ է միայն տղամարդը: Նա առաւօտեան վեր է կենում, կամ իր ձիու հետ է խաղում, կամ իր զէնքերն է մաքրում, կամ վառօդ ու գնդակ է պատրաստում, եւ եթէ ուրիշ գործ չունի, մի ընկեր է գտնում, եւ նստում է նրա հետ, ծխում է ու իր գլխի անցքերն է պատմում: Գլխաւոր արհեստը, որի մէջ նա շահ է բերում իր ընտանիքին, է աւազակութիւնը, — այս գործի մէջ քուրդը ծոյլ չէ:

Նախաճաշիկից յետոյ բէկի որդիքը կամեցան ինձ զուարճացնել եւ առաջարկեցին գնալ որսորդութեան: Ես ընդունեցի: Որսորդութեան համար ամէն ինչ հոգացել էին. ձիերը, շները եւ բազէներն արդէն պատրաստ էին: Մենք առաւօտեան հովով դուրս եկանք: Այն հովտի մէջ, ուր զետեղուած էին եզիդիների վրանները, կար մի ընդարձակ, կանաչապատ դաշտ: Այստեղ բէկի որդիքը կամեցան մի փոքրիկ ձիարշաւ հանդիսացնել: Վրանաբնակների կանայք կանգնած, նայում էին մեզ վրայ: Նրանք խիստ վարպետ կրիտիկոսներ են տղամարդի արիութիւնների: